



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԲԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ԶԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանին մէջ գործող Միջին Արեւելքի Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներու Խորհուրդը, յանձինս Հայ Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի զոյգ առաջնորդներուն՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեանի, Ղրպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Տ. Սերափիոն Եպիսկոպոսի եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Տ. Եւոճին Զափլան Արքեպիսկոպոսի, Երեքշաբթի, 19 Յունիս 2007ին, իր հերթական ժողովը գումարեց Ասորիներու Առաջնորդարանին մէջ:

Առաւօտեան ժամը 11:00ին, եկեղեցական կարճ արարողութիւն մը տեղի ունեցաւ Ս. Եփրեմ Աթոռանիստ եկեղեցւոյ մէջ: Իւրաքանչիւր եկեղեցի իր լեզուով Աստուծոյ յատուկ աղօթք եւ օրհնութիւն վերառաքեց:

Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանային Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի Վարիչներ՝ Գերշ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան:

Բացման աղօթքէն ետք, ժողովը անցաւ օրակարգի լուծման եւ քննարկեց յառաջիկայ միատեղ ծրագիրներու եւ աշխատանքներու կարելիութիւնները: Ժողովը, լսելէ ետք Ուղղափառ Եկեղեցիներու կիրակնօրեայ վարժարաններու եւ երիտասարդաց յանձնաժողովներու գեկոյցները, որոշեց.

ա.- Դեկտեմբերի կիսուն, Էջմիածնական Թեմի Առաջնորդարանին մէջ, Ուղղափառ Եկեղեցիներու Կիրակնօրեայ Դպրոցներու աշակերտութեան համար դաստիարակչական եւ հոգեւոր բնոյթի հաւաք մը կազմակերպել: Յիշեցնենք որ անցնող տարեշրջանին Նոյնափսի հաւաք մը տեղի ունեցաւ մեր Թեմի հիւրընկալութեամբ, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

բ.- Հինգշաբթի, 17 Յունուար 2008ի առաւօտեան ժամը 10:30ին, Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներու համատեղ Ս. Պատարագ մատուցել, մասնակցութեամբ եկեղեցականաց դասերուն, կազմակերպել հոգեւոր լսարան՝ առաւել եւս ծանօթանալու մէկգմիւսի ծիսական հարստութեանց եւ աւանդութիւններուն, ապա տեղի ունենալ հաւաքական ճաշ, հիւրընկալութեամբ մեր Թեմի Ազգային Առաջնորդարանին, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ:

Հաւաքական սիրոյ ճաշի ընթացքին, տեղի ունեցաւ մտերմիկ զրոյց Առաջնորդներու եւ եկեղեցականներու միջեւ, որոնք ընդհանրապէս անդրադարձան եւ խորհրդակցեցան այժմեական հարցերու, ինչպէս նաեւ

Առաքելական Ուղղափառ եկեղեցիները յուզող խնդիրներու՝ վարչական, կրօնադաստիարակչական, պատանեաց եւ երիտասարդական հարցերու:

MEETING OF THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS

On the morning of Tuesday, June 19, the Council of Oriental Orthodox Bishops of the Western United States convened its regular meeting at St. Ephraim Syriac Orthodox Church. Participating in the meeting were H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, H.G. Bishop Serapion of the Coptic Orthodox Church, and H.E. Metropolitan Mor Clemis Eugene Kaplan of the Syriac Orthodox Church.

The Prelate was accompanied by Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian.

The day began with a brief service during which the leaders of each church offered prayers and blessings in their respective languages. The meeting then convened during which the prospect of future collaborative efforts was discussed. After hearing reports from the Sunday School and youth committees the following decisions were made:

1) A spiritual gathering and seminar for Sunday School students in mid-December to be held at the Diocese. A similar gathering was held previously at St. Mary's Church in Glendale hosted by the Prelacy.

2) Joint Holy Mass on the morning of Thursday, January 17, 2008, with the participation of clergy members from each church, and a lecture on the rites and traditions of each church in order to more closely familiarize the members with the sister churches, to be hosted by the Prelate at Holy Cross Cathedral in Montebello.

During lunch an opportunity participants had the opportunity to discuss in more detail issues of concern to Orthodox Churches.